

ՀՀ արդարադատության նախարարի և նախարարության ծրագրերն ու կատարված աշխատանքները

Ուղիղ 11 ամիս առաջ, 2011 թվականի հունավրի 17-ին ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանն իր առաջին ասուլիսի ընթացքում ներկայացրեց իր ծրագրերն ու համակարգում նախատեսվող բարեփոխումները:

Ժամանակն է ամփոփելու, թե ինչ արդյունքներ են գրանցվել, ներկայացված ծրագրերից որոնք են կատարվել ամբողջությամբ, որոնք մասնակիորեն, ինչ քայլեր են նախատեսվում իրականացնել գալիք տարվա ընթացքում:

Տարեսկզբին ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը նախատեսվող քայլերը պայմանականորեն բաժանել էր երկու խմբի.

ա. Կառուցվածքային բարեփոխումներ

բ. Բովանդակային բարեփոխումներ:

ա. Կառուցվածքային բարեփոխումներ /ծրագրեր և կատարված աշխատանք/

- Օպտիմալացնել նախարարության կառուցվածքն ու աշխատակազմը:

Նախարարությունում իրականացված կառուցվածքային բարեփոխումների արդյունքում, ղեկավարվելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ նախագահի 2007 թվականի հրամանագրի պահանջներով ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչությունը, որի խնդիրներն ու նպատակներն են ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախարարությանը վերապահված իրավասությունների սահմաններում ապահովել

- նախարարության առանձնացված ստորաբաժանումների /նոտարներ, ՔԿԱԳ մարմիններ/, առանձին ոչ առևտրային կազմակերպությունների կողմից օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը,:
- Ապահովել դատավորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ հարուցելու և նախարարի լիազորության իրականացումը:
- Կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, ապահովել դիմումներին և բողոքներին ընթացք տալու գործընթացը:

Ստեղծվել են նոր ստորաբաժանումներ՝ պարտականությունների հստակ բնութագրությամբ և պրոֆեսիոնալ աշխատակազմով / ՄԴ ՄԻԵԴ որոշումների ուսումնասիրության աշխատանքային խմբեր/, ՀՀ ԱՆ աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչություն /2011 մայիս-հունիս /, դատական հանձնարարությունների վարման բաժին՝ միջազգային իրավական հարաբերությունների վարչության կազմում:

բ.բովանդակային /ծրագրեր և կատարված աշխատանք/

ՄԴ որոշումների ուսումնասիրության աշխատանքային խմբի խնդիրն է՝ ուսումնասիրել Հայաստանի հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումները և կառավարությանը ներկայացնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների առաջարկ:

Արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է ՄԴ որոշումների հիման վրա օրենսդրական փոփոխություններ մշակող աշխատանքային խումբ: Այն բաղկացած է 6 փորձագետներից՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալի ղեկավարությամբ: Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել են ՄԴ կողմից վերջին տարիներին ընդունված որոշումները և դրանց հիման վրա նախապատրաստվել են օրինագծեր համապատասխան ոլորտներում: Այդ օրինագծերից արդեն ընդունվել և ուժի մեջ են մտել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը /ընդ. է 26.10.2011թ. և ուժի մեջ է մտել 21.11.2011թ./, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը: Վերոհիշյալ խումբը շարունակում է աշխատանքները:

Նույն սկզբունքով և նպատակով ստեղծվել է **Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումներն ուսումնասիրող աշխատանքային խումբ՝ կառավարությանը անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների առաջարկներ ներկայացնելու նպատակով :**

- **Իրականացնել 1990 և հաջորդ տարիների օրենսդրության գույքագրում և վերլուծություն, նպատակ ունենալով բացահայտելու հակասությունները, բյուրոկրատական քաշիշուկների համար պարարտ հող նախապատրաստող դրույթները, կոռուպցիոն ռիսկերը և վերացնելու դրանք:**

Գույքագրվել է 1990-95 թվականների ՀՀ օրենսդրությունը, վերլուծվել և օրենսդրական նախաձեռնության տեսքով առաջարկություններ են ներկայացվել բոլոր շահագրգիռ մարիներին : Հաջորդ տարվանից կշարունակվեն 1995-2000թթ օրենսդրության գույքագրման աշխատանքները , նույն սկզբունքով:

- **կատարել օրենսդրական փոփոխություններ**

Մշակվել և ներկայացվել են օրենքների նախագծեր՝

1. «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

(Նշված օրենքի փոփոխությամբ հավասարեցվել է ամուսնացող կանանց և տղամարդկանց տարիքը՝ վերացվել է գենդերային խտրականությունը):

2. «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

(Նշված օրենքի փոփոխությամբ տասնութ տարին լրացած դատապարտյալը պատիժը կշարունակի կրել միննույն ուղղիչ հիմնարկի առանձնացված տեղամասում)

3. «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

(Նշված օրենքի փոփոխությամբ կարգավորվել է քրեակատարողական որոշակի պաշտոնում ծառայողի հիմնական աշխատավարձի չափը, որը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից):

4. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր:

(Նշված փոփոխություններով կարգավորվել են հայցի ապահովման առանձնահատկությունները):

5. «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

(Նշված օրենքի փոփոխությամբ ԴԱՀԿ ծառայողին տրամադրվող արձակուրդի համապատասխանեցվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքին):

6. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ նոր խմբագրությամբ:

(Նշված օրենքով պարզեցվել են ընթացակարգերը և իրավական հիմք է ստեղծվել էլեկտրոնային գործընթացներն արդյունավետ իրականացնելու համար):

7. «Փաստաբանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

(Նշված օրենքի փոփոխությամբ ընդլայնվել է անվճար իրավաբանական օգնության շրջանակները, հիմնադրվում է փաստաբանական դպրոց):

8. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

(Նշված օրենքի փոփոխությամբ հստակեցնում է ՀՀ քաղաքացի սուրազատ մոր և ապագա ծնողների հարաբերությունները):

• Բարեփոխել նոտարական աշխատանքների գործընթացը, կանոնակարգել նոտարական վճարումների համակարգը

Սահմանվել են նոտարի պաշտոնում նշանակվելու, նոտարի թեկնածուների վերապատրաստման նոր կարգ և չափանիշներ, վերանայվել են նոտարական ծառայությունների համար սակագները, սահմանվել և հստակեցվել են այդ ծառայությունների համար ֆիքսված սակագներ, նոտարական գրասենյակներում պարտադիր տեղադրվել են ՀԴՄ-եր ստեղծելով հնարավորություն նոտարի կողմից իրականացվող գործարքների ժամանակ ծառայության վճարի և պետական տուրքի անկանխիկ և կանխիկ վճարների ընդունման համար:

Ուժեղացվել է նոտարների նկատմամբ վերահսկողությունը: Ուսումնասիրվել են քաղաքացիների բողոքները, համապատասխան ընթացք է տրվել: /տես կից հաշվետվությունը/

• Առկա բոլոր ընթացակարգերի պարզեցում, ժամկետների կրճատում:

Պետոեգիստրում ամբողջովին անցնել ծառայությունների “մեկ պատուհան” սկզբունքին:

Ապրիլից իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ներդրվել է մեկ պատուհանի սկզբունքը, հնարավորություն է ստեղծվել նաև իրավաբանական անձի գրանցումն իրականացնել էլեկտրոնային եղանակով / e-registr.am/ կայքում

ներդրվել է արտաբյուջետային վճարումների համակարգ`

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության գործառույթների համար ողջամիտ ժամկետների սահմանում, արխիվային ակտերի թվայնացում:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառում իրականացված բարեփոխումներ

կրճատվել է ամուսնությունների գրանցման ժամկետը և պահանջվող փաստաթղթերի քանակը
Կառավարության «Անվան փոփոխման կարգն ու պայմանները հաստատելու մասին» որոժման մեջ կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում կրճատվել է դիմումատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:
դեկտեմբերի 1-ից կատարվել են ՔԿԱԳ տարածքային բաժինների էլեկտրոնային կառավարման համակարգի լրամշակման աշխատանքներ, ստեղծվել է համակարգի նոր տարբերակ:

• Քրեակատարողական հիմնարկների պայմանների, բժշկական սպասարկման, կադրերի որակի բարելավում:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վիրաբուժական բաժանմունքի համար ՀՀ 2011թ-ի պետական բյուջեի «Կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կողմից ձեռք է բերվել 82474000,0 դրամ առժողովյամբ բժշկական սարքավորումներ և կահույք:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ ՊՈԱԿ-ը քրեակատարողական ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման անցկացման մեթոդոլոգիայի կատարելագործման շրջանակներում պատրաստել է դիդակտիկ նյութեր, որոնք վերաբերվում են քրեակատարողական ծառայության տարբեր ոլորտների (հանձնույթների ընդունման և հանձնմանը, տրանսպորտային միջոցների զննմանը և այլ աշխատանքներին վերաբերվող ցուցանակներ): պարբերաբար անցկացվել են վերապատրաստման դասընթացներ:

- **Ժամանակակից բանտերի կառուցում:**

Շարունակվում է Արմավիր միջազգային չափանախշներին համապատասխանող

քրեակատարողական հիմնարկի շինարարությունը: Դեկտեմբերի 1-ի դրությամբ ավարտվել են 6 մասնաշենքի համաշինարարական աշխատանքները, ընդհանուր աշխատանքների մոտ 35 % կատարվել է:

- **Անազատության մեջ գտնվողների զբաղվածության ապահովում:**

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի մասնաճյուղերի արտադրական գյուղատնտեսական և հացաթխման արտադրամասերում կատարվող աշխատանքներում ներգրավված են եղել **2010**թվականին **236**, 2011-ին՝ **271** դատապարտյալ: